



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

С 1926-1655

4304

ԵՎԳՈՒՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОССТАНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵԺ ՍԵՐՈՒՆԴ

3КП

L-42

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ս
ՍԼ 297
357
L-42

ԼԵՎ ԳՈՒՐ

ՅԵՐԵՔ ՍԵՐՈՒՆԴ

Թարգմ. Գառ. Հակոբյան



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն—1 9 2 5.



60219-67

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ, ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆԻ ՍԵՐՈՒՆԿ.— Հոկտեմբերյան հեղափոխությունից ընդամենը 7 տարեյեմիայն անցել: Հենց այդ 7 տարվա ընթացքումն ել հասունացավ ցարական ճնշումները չտեսած նոր յերիտասարդ սերունդը:

Հասակավոր բանվորները մասնակցել են 1905 և 1917 թվականների հեղափոխություններին ու իմպերիալիստական պատերազմին: Ցարական ռեժիմի ժամանակ նրանք աշխատել են գործարաններում, կռիվ են մղել կապիտալիստների, ցարական չլինովիկների ու ժանդարմների դեմ և ընդհատակյա այդ կռվում ձեռք են բերել տոկունություն, մինչդեռ, այժմյան կռիւրիտաւթյան հիմնական կորիզը կազմող յերիտասարդ բանվորությունը ցարական ճնշումներ չի տեսել: Յերիտասարդ բանվորությունը, վոր այժմ 19—20 տարեկան ե, հեղափոխության սկզբին 12—13 տարեկան եր: Հասկանալի յե, ի հարկե, վոր նա չեր կարող աշխատել ֆաբրիկաներում

ու գործարաններում և ակտիվ մասնակցութիւն ունենալ յերկրի քաղաքական կյանքում:

Այս բոլորն ավելի շատ վերաբերում է պիոներներին, վորոնք այն ժամանակ 3—4 տարեկան յերեխաներ եյին և, բնական է, վոր տեղի ունեցող անցքերից, վոչինչ չեյին կարող հասկանալ: Այս նոր սերունդը, վոր մեծացել է վերջին տարիների ընթացքում և սերտորեն միաձուլվել խորհրդային իշխանութիւն հետ, մինչև անգամ չի յեկ կարող պատկերացնել ուրիշ ձևի իշխանութիւն: Յեթե կապիտալիստական պայմաններում մեծացած ավագ բանվորների մեջ դեռևս կան հին կարգերից մնացած մի շարք սովորութիւններ, ապա յերիտասարդութիւն մեջ այդ սովորութիւններն ավելի քիչ են և հենց դրա համար ել միանգամայն հասկանալի յե, վոր նոր հասարակութիւն ամենից լավ կարող է կառուցել այն յերիտասարդութիւնը, վորը մեծացել է կապիտալիստական ճնշումներից ազատ պայմաններում:

Ահա թե ինչու Վլադիմիր Իլյիչ Լենինը կոմյերիտիստութիւն համագումարի իր ճառում ասաց, վոր միայն յերիտասարդ բանվորների նոր սերունդը կարող կլինի կոսակցութիւն ղեկավարութիւնը կոմունիստական նոր հասարակութիւն կառուցել:

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՅՅԵԼ ԿՈՄՈՒՆԻՉՄԸ.— Յեթե մենք վերցնենք այն հիմնականը, վոր անհրաժեշտ է կոմունիստական նոր հասարակութիւն կառուցելու հա՛մար— դասակարգերի վոչնչացումը, այսինքն չ'է կողմից կապիտալիստների վոչնչացումը և մյուս կողմից բանվորների ու գյուղացիների միջի խտրութիւնների վոչնչացումը— յեթե մենք վերցնենք այս խնդիրը, ապա պետք է ասել, վոր այդ չի կարող լրիվ իրագործվել այն սերունդների կողմից, վորոնք դաստիարակվել են կապիտալիստական պայմաններում: Ռուսաստանի բնակչութիւն մեծամասնութիւնը գյուղացիութիւնն է: Գյուղացին, դա մանր սեփականատերն է: Նա ունի ինվենտար, ձի, տնտեսութիւն: Բայց կոմունիզմը կարելի յե կառուցել միայն այն ժամանակ, յերբ գյուղացիները գյուղատնտեսական տեխնիկայի զարգացմամբ ու կոոպերացիայի ոգնութիւնը կը ձեռնարկեն հողի մշակման նոր յեղանակին, նոր տեխնիկային կը կառուցեն խոշոր հողագործական տնտեսութիւն: Ամենից առաջ դրան խանգարում են այն սովորութիւնները, վոր հարյուրավոր տարիների ընթացքում արմատացել են գյուղացու մեջ:

Այդ սովորութիւնները մեկ կամ 2-3 տարեկա ընթացքում փոխել չի կարելի: Դրա համար հարկավոր է յերկար ու ձիգ տարիներ կռիվ մղել

այն նախապաշարմունքների դեմ, վոր ունի գյուղացին և վորոնց արժատը գյուղացիական մանր տնտեսությունն է: Հասկանալի չէ, վոր այն ժամանակ, յերբ խորհրդային կարգի պայմաններում մեծացող ու դաստիարակվող գյուղացիության յերեխաների մեջ կսրելի յե վոչընչացնել մանր-սեփականատիրական հին նախապաշարմունքներն ու տրամադրությունները ծերերի մեջ այդ վոչնչացնել համարյա անկարելի է: Կոմսոնիստական Կուսակցության Կոմյերիտմիություն հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, վորպեսզի վերադաստիարակի, կամ դաստիարակի գյուղացիական բնակչության մատաղ սերունդը: Յեթե մենք այդ չանենք, ապա յերբեք կոմունիզմին չենք կարող հասնել:

Ահա թե ինչու մեր Կուսակցության կազմի մեջ ավելի շատ բանվորներ են մտնում, քան գյուղացիներ, իսկ Կոմյերիտմիության մեջ բանվորներն ու գյուղացիները մոտավորապես հավասար են:

Մենք ձգտում ենք այնպես անել, վոր պիտաներների մեջ ավելի շատ գրավենք գյուղացիներին, յերեխաներին, քան Կոմյերիտմիության մեջ:

Կոմյերիտմիությունը հեշտությամբ կարող է վերադաստիարակել գյուղացիական յերիտասարդությանը, իսկ պիտներներն ավելի ճիշտ կա-

րող են վերադաստիարակել գյուղացիության յերեխաներին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐ-ԳԻ ՍՈՍՋՍՎՈՐ ԳՈՒՆԴ. Կուսակցության համար ավելի գովար է, իսկ յերբեմն էլ անհնարին, իր շարքերի հասակավոր գյուղացիների վերադաստիարակումը: Դրա համար կան մի շարք ոժտանդակ կազմակերպություններ, վորոնք դաստիարակում են գյուղացիությունը, քաշելով նրանց հասարակական աշխատանքի մեջ: Այդպիսի կազմակերպություններ են խորհուրդները, գյուղացիական փոխադարձ ոգնություն Կոմիտեները, կոոպերատիվներն ու այլ կազմակերպությունները, վորոնք ընդգրկում են գյուղացիության մասսան (չքավոր և միջակ): Բայց Կուսակցությունը, ըստ իր կազմի, պետք է մնա բանվորների Կուսակցություն, վորովհետև բանվոր դասակարգը միակ դասակարգն է, վոր մանր սեփականություն չունի, դրա համար էլ նա մազաչափ անգամ շահագրգռված է պահպանելու կապիտալիստական կարգը, վոր մասնավոր-սեփականատիրական, կապիտալիստական կարգերի թողած սովորություններից շատ ավելի քիչ ունի, և դրա համար էլ բանվորները միշտ ավելի ճիշտ կարող են ժողովել զանազան հարցերի լուծման: Բանվոր դասակարգը միակ դասակարգն է, վոր ամբողջ աշխար-

հում կարող ե տալալել բուրժուազիայի իշխանությունը, կոմունիզմ կառուցել և վորն իր յետեից կարող ե տանել մնացած բոլոր աշխատավոր մասսաները: Կոմունիստական կուսակցությունը — պրոլետարիատի մարտական ավանգարդը — չի ձգտում իր շարքերի մեջ առնել ամբողջ բնակչությունը:

Կուսակցությունը միայն բանվոր դասակարգի ամենագլխավոր, ամենաառաջավոր շերտի և նրան հարող աշխատավորների շերտերի կազմակերպությունն է: Այնպես վոր, կուսակցության մեջ մտնելու համար հարկավոր ե լինել համեմատաբար քաղաքականապես զրադետ, անհրաժեշտ ե լինել խիստ կարգապահ, հասկանալ կուսակցության նպատակներն ու անելիքները:

Կոմյերիտականին այդպիսի պահանջներ մենք չենք առաջադրում, ևս առավել չենք առաջադրում պիոներների նկատմամբ: Ահա թե ինչո՞ւ համար մենք կարող ենք ասել, վոր կուսակցության տարբերությունը կոմյերիտմիությունից այն ե, վոր կոմյերիտմիությունն ավելի մասսայական կազմակերպություն ե, վորն ընդունում ե իր շարքերի մեջ նաև անգիտակից կամ քիչ գիտակից յերիտասարդ բանվորներին ու գյուղացիներին, վորպեսզի նրանց դաստիարակի ու պատրաստի կուսակցության մեջ մտնելու հա-

մար: Կուսակցությունը իր շարքերի մեջ հում նյութ ընդունել չի կարող, վորովհետև ամենից առաջ նա պետք ե ակտիվ կերպով կռվի և յերկիրը կառավարի: Պիոներներն յերեխաների ավելի մեծ մասսաներ են ընդգրկում, քան այդ անում ե կոմյերիտմիությունը յերիտասարդների նկատմամբ, վորովհետև ավելի հեշտ ե վերադաստիարակել վոչ միայն բանվորական միջավայրից, այլև կիսապրոլետարիատ շերտերից՝ գյուղացիներից, ծառայողներից և այլն զուրա յեկած յերեխաներին:

Ո՞ՒՄ Ե ԸՆԴԳՐԿՈՒՄ ԿՈՄՍՍԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇՍՐՃՈՒՄԸ. — Դրա համար ել պիոներական կազմակերպությունը հանդիսանում ե և պետք ե հանդիսանա ավելի մասսայական կազմակերպություն, քան կոմյերիտմիությունը: Կոմյերիտմիությունը ավելի շատ պետք ե ընդգրկե վոչ պրոլետարական շերտերի յերիտասարդություն, քան այդ անում ե կուսակցությունը. իսկ պիոներները պետք ե ընդգրկեն ավելի շուտ վոչ պրոլետարական շերտերի յերեխաներ, քան այդ անում ե կոմյերիտմիությունը:

Պիոներական կազմակերպության միջոցով մենք հետզհետե կհասնենք այն վիճակին, վոր յեթե վոչ մեկ, թերևս տաս տարվա ընթացքում

(մի քիչ ավել կամ պակաս—այդ գուշակելը վոչ մի իմաստ չունի) բոլոր մանուկներն, ամբողջ մատաղ սերունդը կմանեն կոմունիստական մանկական շարժման մեջ. այդ կոմունիստական մանկական շարժումն ամբողջութամբ ու լրիվ կը ձուլվի յերեխաների կոմունիստական դաստիարակության հետ զպրոցում, զպրոցական դաստիարակության հետ: Յեւ իրոք կոմունիզմի ժամանակ չի լինի վոչ մի կուսակցություն, կոմունիզմի ժամանակ բոլոր մարդիկ կկազմեն մի միասնական կոմունիստական կուսակցություն: Այն ժամանակ նույնպես չի լինի և կոմյերիտմիություն, այլ ամբողջ յերիտասարդությունը կկազմի համարյա մի միասնական կոմյերիտմիություն. բայց ինչպես հասնել դրան: Հասկանալի չէ, վոր առաջին հերթին իրենց դրոշակի տակ ամբողջ բնակչությունը գլխովին համախմբելուն կհասնեն պիոներական ջոկատները, վորովհետև կոմունիստական դաստիարակության ամենից շատ յերեխաներն են յենթարկվում: Հին հասարակության սովորություններ նրանք չունեն և ամենից առաջ կարող են լրիվ ու ամբողջովին միանալ կոմունիստական պրոլետարական շարժմանը: Այդ պատճառով ել պիոներները ավելի շուտ, քան կոմյերիտմիությունն ու կուսակցությունը կհասնեն այն բանին, վոր ամ-

բողջովին կընդգրկեն բոլոր յերեխաներին և պիոներական առանձին կազմակերպությունների անհրաժեշտությունը, վորպես անկազմակերպ յերեխաների մեջ աշխատանք տանող ինքնուրույն կորիզ, կչքանա:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.— Ահա թե ինչումն է առաջին տարբերությունը կուսակցության, կոմյերիտմիության և պիոներների միջև:

Կուսակցությունը ղեկավարում է յերկիրը, ղեկավարում է մեր միություն ամբողջ քաղաքական կյանքը, պայքար է մղում կապիտալիստների դեմ, կոմյերիտականը մասնակցելով այդ կովին, սովորում է կուսակցության անդամ դառնալ, իսկ պիոներները նույնպես մասնակցում են բանվոր դասակարգի կովին ու պատրաստվում են կոմյերիտմիության շարքերը մտնելու համար:

Յեթե վեր առնենք մոտակա տարիները, ապա հավանական է, վոր վոչ բոլոր կոմյերիտականները կարող են մտնել կուսակցության մեջ, վորովհետև շատ բնկերներ կոմյերիտականների զպրոցն անցնելուց հետո կուսակցության համար անպետք դուրս կգան, կոմյերիտական ուսման քննությունը չեն բռնի: Իրոք մինչև այժմ յեղել են բավականաչափ յերիտասարդներ, վո-

րոնք կոմյերիտմիութեան շարքերում յեղել են մի քանի ամիս, մեկ, կամ նույնիսկ յերկու տարի և դուրս գալով կոմյերիտմիութեանից, չեն կարողացել մասնել կուսակցութեան մեջ: Կոմյերիտմիութեանը հանդիսանում է զտիչ մի մարմին, վորն ընտրելով լավագույն տարրերին, անց է կացնում կուսակցութեան մեջ: Նման զտիչ մարմին ել կոմյերիտմիութեան նկատմամբ հանդիսանում է պիոներական կազմակերպութեանը:

Սորհրդային իշխանութեան գոյութեան պայմաններում, յերբ կոմունիստական կուսակցութեանը հանդիսանում է իշխանութեան զուլս կանգնած կուսակցութեան, յերբ նրա պոչից կարող են կաշի գանազան ոտար տարրեր, վորոնք կուսակցութեանը վոչ միայն չեն ոգնի աշխատելու, այլ ընդհակառակը, կխանգարեն, նրա հեղինակութեանը բանվորների աչքում կզցեն, այդպիսի պայմաններում կոմյերիտմիութեան կողմից յերիտասարդութեան լավագույն մասը գտելը և նրան կուսակցութեան համար պատրաստելն հսկայական նշանակութեան ունի:

Կուսակցութեան մեջ մասնող կոմյերիտի նրկատմամբ հենց այժմ ել պետք է լինեն ավելի բարձր պահանջներ, քան կուսակցութեան մեջ մասնող անկուսակցականի նկատմամբ, վորովհետև նախ անկուսակցականը չունի այնպիսի կազ-

մակերպութեան, վորպիսին ունի յերիտասարդութեանը, վորը կարողանար գործնականապես ստուգել նրա աշխատանքը: Իսկ յերկրորդը նրա համար, վոր հասակավոր բանվորներն անցել են ընդհատակյա աշխատանքների ու քաղաքացիական կռիւների բովից, վորպիսին չի անցել յերիտասարդութեանը: Նույնպես և հաշվի պետք է առնել այն հանգամանքը, վոր կոմունիստական կուսակցութեանը յերբ իր ձեռքումն է պահում իշխանութեանը, հնարավորութեան ունի բանվորական և գյուղացիական յերիտասարդութեան դաստիարակութեանը կանոնավոր հիմքի վրա դնելու, ապա ամենից առաջ նա պետք է ձգտի, վորպեսզի այն ընկերները, վորոնք յերիտասարդութեան միջից այժմ անցնում են կուսակցութեան մեջ զարգացման մակարդակով, աշխատելու ընդունակութեամբ ավելի բարձր լինեն:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ՊԱՏԲԱՍՏՎՈՒՄ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՌՆԵՐԸ՝ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.—Կուսակցութեանը ձգտում է, վորպեսզի իր կազմը վորակապես լավանա, վորպեսզի այն նոր ուժերը, վորոնք յերիտասարդութեան շրջանից այժմ անցնում են կուսակցութեան մեջ, լինեն լավ կռիված ու պատրաստված:

Ահա թե ինչու կուսակցութեան մեջ մասնող

կոմյերիտմիության անդամի վերաբերմամբ պահանջներն ավելի յեն, քան կուսակցության շարքերը մտնող շարքային անկուսակցականի վերաբերմամբ:

Նույնը վերաբերում է նաև կոմյերիտմիության մեջ մտնող պիոներներին: Կոմյերիտմիության մեջ մտնող պիոներների վերաբերմամբ պահանջը պետք է ավելի լինի, քան կոմյերիտմիության մեջ մտնող անկուսակցական յերիտասարդ բանվորի կամ գյուղացու վերաբերմամբ: Հենց այդ պատճառով ել նա անցնում է պիոներական դպրոցը, վորպեսզի փոքր իշխատե քաղաքական զարգացում ստանա, փոքր իշխտե կարգապահություն սովորի: Կոմյերիտմիությունը ձգտում է, վորպեսզի աստիճանաբար գլխավորապես այդ պիոներական գնդի հաշվին աճե, վորոնք տարեց-տարի աճելով, մեր շարքերը կը լցնեն թարմ ուժերով:

Կոմյերիտմիության մեջ մտնող շատ ընկերներ չեն կարողանում պարզ պատկերացնել թե յերբ, մինչև վոր ժամանակ և ի՞նչ կերպ նրանք կպատրաստվեն կուսակցության մեջ մտնելու համար: Այն հարցին, թե՝ «գու յերբ ես մտադիր մտնել կուսակցության մեջ», տղաներից շատերը պատասխանում են՝ «չգիտեմ», կամ ընդհանուր դարձվածքներով ինչպես՝ «յերբ պատրաստ լի-

նեմ», կամ նույնիսկ «յերբ բջիջն ինձ կհանձնի»: Բայց տղաների կողմից այսպիսի վերաբերմունք ճիշտ չէ, ինչպես հեշտ չէր լինի և այն, վոր կոմյերիտմիությունը կոմյերիտականին բռնի կերպով քաշեր կուսակցության մեջ: Կոմյերիտմիության յուրաքանչյուր անդամ պետք է լավ գիտենա, վոր նա պարտավոր է, ըստ հնարավորության, ամենակարճ ժամանակում պատրաստվի կուսակցության համար, վոր նա պարտավոր է լարել իր բոլոր ուժերը, վորպեսզի հնարավոր յեղածին չափ շուտ մտնի կուսակցության մեջ, չսպասելով, վոր բջիջն անի նրան այդ առաջարկը, կամ թե մի վորևե հանդիսավոր տոնի կազմակերպված ձևով հանձնի նրան: Նույնը վերաբերում է և պիոներներին: Ամեն մի պիոներ պետք է գիտենա, վոր իր հիմնական անելիքն այն է, վոր կարճ ժամանակում պատրաստվի կոմյերիտմիության շարքերը մտնելու համար: Յեվ վոչ այն ժամանակ, յերբ պիոներական գունդը կհանձնի նրան կոմյերիտմիությունը, այլ յերբ նա իրեն իրոք բավականին պատրաստված կզգա կոմյերիտի շարքերն անցնելու համար:

ՈՒՄ ՅԵՏԵՎԻՅ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ Ե ԳՆՈՒՄ, ԱՊԱԳԱՆ ՆՐԱՆ Ե.—Ահա այսպես աստիճանաբար տեղի յե ունենում պիոներներից դեպի կոմյերիտմիությունը, իսկ կոմյերիտմիու-


թյունից դեպի կուսակցությունն անցնելը: Հին առածն ասում է. «ուժ յետևից յերտասարդությունն է գնում, ապագան էլ նրան է»: Միանգամայն հասկանալի չե, վոր յուրաքանչյուր կուսակցություն աշխատում է ազդեցություն ձեռք բերել յերիտասարդության շրջանում: Բայց վոչ մի կուսակցություն, վոչ մի յերկրում չունի այնպիսի բազմաթիվ պահեստ (ռեզերվ) և այնպիսի ամուր ու իր հետ սերտ կապված պահեստ, վորպիսին ունի մեր կոմունիստական կուսակցությունը: Վոչ մի տեղ և վոչ մի մենչևիկյան, կամ բուրժուական կուսակցության մեջ չկա այնպիսի հենարան, այնպիսի ոգնական և այնպիսի փոխարինող, ինչպիսին հանդիսանում է կոմյերիտ-միությունը, ինչպիսին հանդիսանում է աշխարհում դեռ չեղած, վերջին տարիներում աճած և շարունակ աճող ու արդեն հարյուր հազարավոր մանուկներ ընդգրկող մանկական կոմունիստական շարժումը: Զուր չե, վոր Վլադիմիր Իլյիչ Լենինը շատ մեծ ուշադրություն եր նվիրում յերիտասարդությանը, նրա դաստիարակմանն ու կազմակերպմանը: Յեվ վորովհետև Ռուսաստանում կոմունիստական կուսակցությունն իր թիկունքում ունի կոմյերիտների միլիոնանոց բանակ, վոր դեռ շարունակում է զարգանալ ու քանականապես ավելի արագ աճել, քան ինքը կու-

602/9-67

սակցությունը և քանի վոր կոմյերիտմիությունն իր թիկունքում ունի այնպիսի փոխարինող, ինչպիսին պիտներական կազմակերպություններն են, վորոնք ունեն 600,000 անդամ ու ավելի արագ են աճում, քան կոմյերիտմիությունը, հենց մենակ այս պատճառով վորքան վստահորեն կարելի չե ասել, վոր վոչ մի բան չի կարող հին կապիտալիստական կարգը վերադարձնել:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՍ.ԶՄՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՄՅԵՐՏԻՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇՍՐԺՈՒՄԸ. — Այն հարցից, թե կուսակցությունը, կոմյերիտմիությունը և պիտներները աճմամբ, քանակով ընդգրկվում ու ազդեցությամբ պրոլետարական և վոչ պրոլետարական շերտերի վրա ինչով են իրարից տարբերվում, մենք այժմ անցնենք այն խնդրին թե ինչ կերպ է կառուցվում կուսակցությունը, ինչ կերպ՝ կոմյերիտմիությունն ու պիտներական մանկական շարժումը: Սկսենք վերջից: Սկսենք պիտներներից, ապա մոտենանք կուսակցությանը:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՍ.ԶՄՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ. — Ինչպես է կառուցվում պիտներական շարժումը: Վերջենք Փարբիկան: Փարբիկայում մենք ունենք (յեթե Փարբիկան շատ թե քիչ խոշոր է) պիտներական գնդեր, վորոնք կազմում են կոմունիստական մանկական շարժման հիմնական բջի-



ջր: Այդ գնդերի գլուխ կանգնած է կոմյերիտականը, վոր նշանակված է կոմյերիտական թխան բջիջի կողմից: Ապա գնդերը բաժանվում են ողակների և յուրաքանչյուր ողակի գլուխ կանգնած է արդեն պիտներ ողակապետ, վոր ընտարված է տվյալ ողակի կողմից: Այդ գնդերը շրջանի մասշարով միանում են ու կազմում շրջանային պիտներական կազմակերպություն, վորը գումարում է իր ժողովները, կամ ինչպես ասում են, տվյալ շրջանի գնդերի համաքուլթներ:

Ժամանակ առ ժամանակ տեղի յեն ունենում շրջանի պիտներների շրջանային կոնֆերենցիաներ:

Պիտներների շրջանային կազմակերպության գլուխ կանգնած է պիտներների շրջանային բյուրոն, վոր նշանակվում է կոմյերիտական շրջանային կոմիտեյի կողմից: Այդ շրջանային բյուրոյի կազմի մեջ մանում են առավելապես կոմյերիտականներ, և միայն փոքր թվով պիտներներ:

Յերբեմն հրավիրվում է պիտներների նահանգական կոնֆերենցիա: Այդպես Մոսկվայում տեղի ունեցավ, պիտներների Մոսկվայի նահանգական կոնֆերենցիա (համառուսական կոնֆերենցիա չի յեղել): Մոսկվայի պիտներական կազմակերպության գլուխ կանգնած է Մոսկվայի

բյուրոն, վոր նշանակվում է կոմյերիտական Մոսկվայի կոմիտեյի կողմից ու բաղկացած է բացառապես կոմյերիտականներից: Համառուսական պիտներական կազմակերպության գլուխը՝ կենտրոնական բյուրոն, վոր կազմված է դարձյալ բացառապես կոմյերիտականներից: Համաշխարհային պիտներական կազմակերպության և համաշխարհային կոմունիստական մանկական շարժման գլուխ կանգնած է Յերիտասարգություն կոմունիստական Խնտերնացիոնալի Գործադիր կոմիտեյի կողմից նշանակված բյուրոն, վորի մեջ մանում են բացառապես միջազգային պատանեկան կազմակերպությունների մասշտարով աշխատող կոմյերիտականները:

Ուրեմն ինչ ենք տեսնում: Մենք տեսնում ենք, վոր կոմունիստական պատանեկան շարժումն ինքնուրույն կազմակերպություն չի, ուր բոլոր կոմիտեները, սկսած գործարանային առաջապահների գնդերից և վերջացրած կենտրոնական Բյուրոյով, ընտրվելին պիտներների կողմից:

ԿՈՄՅՈՒՆԻՏԻՍԻՏԻԿԱՆԻՅԱՆՆԵՐԸ՝ ՂԵՆԱՎԱՐ ՊԻՏՆԵՐԱԿԱՆ ՇԱՐՃԱՄԱՆ.— Ծիծաղելի և սխալ կլիներ, յեթե գնդի շրջանային, նահանգական ու կենտրոնական բյուրոյի գլուխ կանգնած լինելին իրենք—պիտներները: Ըստ իրենց հասակի և զարգացման,

պիոններն երբ չեն կարող ստեղծել ինքնուրույն կազմակերպութիւն, վոր կարողանար կառավարվեր բացառապէս իրենց սեփական ուժերով ու միայն գտնվել կոմյերիտմիութեան ընդհանուր ղեկավարութեան տակ: Ահա թե ինչու պիոներական գնդերի և պիոներական շարժման գլուխ կանգնած են, ինչպէս ասում են, պիոններին ալագ յեղբայրները — կոմյերիտականները: Կոմյերիտները ձգտում են յերեխաներին քաշել հասարակական ակտիվ աշխատանքների մեջ, բայց հիմնական ղեկավարութիւնը և բոլոր աշխատանքների վարումն ամբողջութեամբ ու լրիվ հանձնված է կոմյերիտմիութեանը:

Այստեղ առաջ է գալիս հետևյալ խնդիրը՝ ինչու կուսակցութիւնը կոմունիստական մանկական շարժման ղեկավարութիւնը հանձնել է կոմյերիտմիութեանը: Ինչու գնդերի առաջնորդներին և շրջանային նահանգական պիոներական կազմակերպութիւնների գլուխ կանգնած չեն բոլորներ, վորոնք հատկապէս կազմված են կուսակցութեան կոմիտեներին կից ու բացառապէս կուսակցութեան անդամներից, վորոնք կարող կը լինեյին տանել պիոներական գործը: Այս բացատրվում է նրանով, վոր կոմյերիտմիութիւնը մի կազմակերպութիւն է, վորն իր հասակով ավելի մոտ է կանգնած պատանիներին, և կոմ-

յերիտներն ավելի լավ կարող են մոտենալ պատանիների մեջ կատարվող աշխատանքներին, քան այդ կարող են անել հասակավոր բանվորները, բանվորուհիները և կուսակցութեան անդամները: Յերեխաներին հետ աշխատելու համար պետք է հատուկ շնորհք: Լուրջ գիտելիքները պետք է կապել խաղերի և զվարճութիւնների հետ, պետք է կարողանալ աշխուժութեան ու կայտառութեան տարրեր մտցնել բոլոր գրույցների մեջ: Այլ կերպ յերեխաներին համախմբել անկարելի յէ: Իսկ այս բանը կարող են անել միայն այն տղաները, վորոնք գիտեն ինչպէս մոտենալ և ինչպէս զբաղեցնել յերեխաներին: Մյուս կողմից այն հանգամանքը, վոր կոմյերիտմիութեանն է հանձնված մանկական կոմունիստական շարժման ղեկավարութիւնը, հենց կոմյերիտմիութեան դաստիարակութեան տեսակետից ել խիստ մեծ նշանակութիւն ունի, վորովհետև պիոններների շարքերում աշխատելու համար նշանակված կոմյերիտականներն այդ աշխատանքներում իրենք ել են կազմակերպվում ու սովորում կազմակերպել անկուսակցական մանուկներին, իրենք ել են կարգապահութիւն սովորում: Ահա թե ինչու պիոներական շարժման գործի ձեկավարութիւնն ու գնդերի աշխատանքները կուսակցութիւնն անմիջականորեն հանձնում է

կոմյերիտականներին: Այդ չի նշանակում, թե կուսակցութիւնը բնավ չի ղեկավարում պիոներներին մեջ կատարվող աշխատանքը: Բայց, կուսակցութիւնը միայն ընդհանուր ղեկավարութիւն է ցույց տալիս, առաջադրում ընդհանուր անելիքներ, իսկ անմիջական ղեկավարութիւնը և աշխատանքի անմիջական վարումն ընկնում է կոմյերիտիության վրա:

Այստեղ մի հարց էլ է ծագում — ինչո՞ւ պիոներների մեջ տարվող աշխատանքը հանձնել մանկավարժ-ուսուցիչներին, վորոնք իրենց ամբողջ կյանքը նվիրում են յերեխաներին սովորեցնելու և նրանց դաստիարակելու գործին:

Յեւ արդյոք մեղանում շատ մանկավարժներ կան կանգնած պիոներական կազմակերպութիւնների, պիոներական գնդերի գլուխ: Առ այժմ շատ և շատ քիչ: Սա վերաբերում է թե քաղաքին և թե գյուղին: Կարելի՞ յե արդյոք մանկավարժ-ուսուցչին, դպրոցական աշխատավորին դարձնել պիոներական գնդի առաջնորդ կամ պիոներական տեղական բյուրոյի նախագահ: Հագիլ թե: Պիոներական աշխատանքները պահանջում են վոչ այնքան մանկավարժական գանադան յեղանակներ, վորքան ղեկավարների կողմից կոմունիստական ճիշտ մտեցում, գործարանի կամ տվյալ գյուղի հասարակական կյանքի

մեջ անմիջականորեն աշխատանքներ տանելու ունակութիւն ու ջանքերի հետ քաղաքական նյութերի շուրջը զրույցներ տանելու հասութիւն, մինչդեռ մեր դպրոցական աշխատավորները, մեր մանկավարժները մինչև որս իրենց կրթական հիմնարկներում ու իրենց ամբողջ աշխատանքներում պատրաստել են բացառապէս դպրոցական զբաղմունքների համար:

Չպետք է մոռանալ, վոր ուսուցչութիւնը, ուսուցիչները նշանակալի չափով վարակված են հին սովորութիւններով, վոր նրանք սովորել ու դաստիարակվել են հին բուրժուական դպրոցներում, վորոնց ազդեցութիւնը նրանց վրա բավականին ուժեղ է: Միայն վերջին ժամանակներն ուսուցչութիւնը (հատկապէս գյուղական) սկսեց թեքվել դեպի կոմունիստական կուսակցութիւնը, բայց և այնպէս պիոներական կազմակերպութիւնների ղեկավարութիւնն այժմ չի կարելի ամբողջովին տալ ուսուցիչների ձեռքը: Յուրաքանչյուր յերիտասարդ բանվոր և յուրաքանչյուր յերիտասարդ բանվորուհի լիովին կարող է պիոներական կոլլեկտիվները ղեկավարել:

Ահա թե ինչո՞ւ պիոներական գնդերի ղեկավարութիւնը և անմիջական աշխատանքը բացառապէս հանձնված է կոմյերիտիությանը,

վորը գրավում ե ղեպի այդ գործը նաև դպրոցական աշխատավորներին:

ՊԻՈՒՆԵՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՊԱՀԱՆԱԿԻ ԴԵՖԵՐԸ (ՖՈՐՊՈՍՏԵՐԸ) ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ.—Ապա պիտե՛րական կազմակերպությունը դպրոցներում ունի, այսպես ասած, առաջապահ դիրքեր: Ի՞նչ են նրանք: Առաջավոր դիրքեր հանդիսանում են տվյալ դպրոցներին կից կոմյերիտական ֆրակցիայի նման մի բան: Փորպոսաների տարբերությունը ֆրակցիայից այն ե, վոր ֆրակցիան աշխատանք ե տանում տվյալ ձեռնարկության բանվորների և բանվորուհիների մեջ, մինչդեռ ֆորպոսան իրեն նպատակ չի դնում տվյալ դպրոցի ուսուցիչների, բանվորների ու ծառայողների մեջ աշխատանք տանել: Նախ և առաջ ֆորպոստը պետք ե միացնի և իր յետևից տանի դպրոցական մանկական մասնասները և ապա իրեն կազմակերպված պահի աշակերտական անկազմակերպ մասի առաջ ու նրանց որինակ դառնա:

Ահա թե ինչպես ե կառուցվում պիտե՛րական կազմակերպությունը: Նա ինքնուրույն կազմակերպություն չե, նա նույնիսկ մանր խնդիրներում ղեկավարվում ե անմիջականորեն կոմյերիտների կողմից, վորոնք համերաշխ կերպով աշխատում են հեղափոխական ուսուցչության մասնակցությունը:

Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎԱԾ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ.—Այժմ անցնենք կոմյերիտություն կառուցման խնդրին: Արդո՞ք այսպես ե կառուցվում կոմյերիտությունը, ինչպես պիտե՛րական կազմակերպությունն ու գնդերը: Կոմյերիտությունը ֆաբրիկաներում չունի իր գրնդերը, չունի իր ողակները: Նա չունի իր առաջնորդները: Փաբրիկայում հիմնական կորիզը կազմում ե կոմյերիտական բջիջը, վորը միացնում ե տվյալ ձեռնարկության բոլոր կոմյերիտականներին: Ի՞նչով ե բջիջը տարբերվում գնդից: Ամենից առաջ, բջիջը ռազմական պլանով ողակների չի բաժանվում: Նրա մեջ մտնում են բոլոր կոմյերիտականները: Բայց գլխավորն այն ե, վոր բջիջն ինքն ե ընտրում իր բյուրոյին, վորը ղեկավարում ե ամբողջ աշխատանքը, իսկ կուլեկտիվներում աշխատանքները ղեկավարում են վոչ թե պիտե՛րների կողմից ընտրած առաջնորդները, այլ՝ կոմյերիտականների բջիջի կողմից նշանակվածները: Ապա շրջանի մասշտաբով գոյություն ունի կոմյերիտություն կառուցման շրջանային կոմիտե, վորը վոչ թե նշանակվում ե շրջանային կուսակցության կոմիտեյի կողմից, այլ ընտրվում ե կոմյերիտություն կառուցման շրջանային կոնֆերանցիաներում:

Նույնն ե նաև Մոսկվայի, կենտրոնական և միջազգային մասշտաբով: Կոմյերիտություն

Մոսկվայի կոմիտեն ընտրվում է Մոսկվայի հասանգական համագումարում, Կենտրոնական կոմիտեն՝ համառուսական համագումարում, իսկ Յերիտիմիններն Գործադիր կոմիտեն՝ նրա համալսարհային կոնգրեսում։ Այլ խոսքով դա նշանակում է, վոր կոմյերիտմիությունը հանգիստանում է ինքնուրույն կազմակերպություն, վոր ինքնուրույն կերպով ընտրում է իր կոմիտեները և այդ կոմիտեները ղեկավարում են բոլոր կոմյերիտական աշխատանքներն ու ինքնուրույն կերպով տնօրինում իրենց գործերը։ Կարո՞ղ ես արդյոք լինել կոյերիտմիության մեջ աֆիսիսի դրություն, վոր կոմյերիտմիության գլուխ կանգնած լինի կուսակցության կողմից նշանակված հին անգամ, վորը կոմյերիտմիության մեջ յերբեք յեղած չլինի։ Այդպիսի դրությունը ճիշտ չէր լինի և ահա թե ինչու։ Կոմյերիտականը կարող է դաստիարակվել միայն իրենագործունեյությամբ։ Կոմյերիտականներն արդեն աֆիսիսի հասակում են գտնվում, վոր կարող են ինքնուրույն կերպով լուծել իրենց վերաբերող բոլոր հարցերը։

Այժմ մեզանում կոմյերիտմիության հիմնական կազմը 18—19—20 տարեկան տղաներն են։ Կոմյերիտմիության մեջ ընդունում են 14-ից մինչև 23 տարեկանը։ Յերբեմնի ընդհատակյա աշ-

խատանքներում (20 տարի սրանից առաջ) հասակավոր—մորուքավոր բանվորները շատ չէին, այլ ավելի շատ կային իսկապես յերիտասարդ բանվորներ՝ նույնպես 19-20 տարեկան։ Այն ժամանակ բուրժուազիան կծու կերպով ծաղրելով կուսակցությունը ասում էր՝ «Ձեզ մոտ ծրծկեր յերեխաներ են, այդ կուսակցություն չէ, այլ միայն խողիգանություն է, յերիտասարդ մարդկանց հավաքածու»։

Վրադիմիր Իլյիչ Լենինը դրան պատասխանում է, վոր մեր կուսակցությունը վորչափով հանգիստանում է առաջավոր ու կոմունիստական հասարակություն կառուցող կուսակցություն, այն չափով անխուսափելիորեն ու միանգամայն հասկանալի պատճառներով նա իր շարքերի մեջ է քաշում յերիտասարդ բանվորությունը, նոր դասակարգի ամենայերիտասարդ, ամենահեղափոխական ուլժերը։ Չնայած վոր ընդհատակյա աշխատանքներում կուսակցության մեջ կային մեծ թվով յերիտասարդներ, այնուամենայնիվ կուսակցությունը տանում է հսկայական ու համառ պայքար և աշխատանք։ Այդ ապացուցում է, վոր յերիտասարդ բանվորությունը կարող է ինքնուրույն կերպով գործել։ Լենինն ասում էր, վոր մեր կուսակցությունը միշտ էլ կլինի առաջավոր դասակարգի յերիտասարդության կուսակ-

ցություն, այսինքն նա միշտ ել լինելու յե այն
կուսակցությունը, վորն ընդգրկում ե բանվոր
դասակարգի համեմատաբար ավելի յերիտապարզ
շերտերը:

Կասկածից դուրս ե, վոր յեթե ինչ-ինչ
պատճառով կոմյերիտմիությունն այժմ գոյու-
թյուն չունենար, մինչև որս կուսակցության մեջ
չմտած կոմյերիտականների զգալի մասսան կու-
սակցության անդամ դառած կլինեիր և նրա մեջ
կունենար գործոն մասնակցություն: Մենք ար-
դեն ասացինք, վոր կուսակցության մեջ մտնող
կոմյերիտականների նկատմամբ տրվում են ավե-
լի բարձր պահանջներ, քան կուսակցության մեջ
մտնող հասակավոր անկուսակցական բանվորնե-
րի վերաբերմամբ: Այդ իսկ պատճառով հասկա-
նալի յե, վոր յերբ գոյություն ունի կոմյերիտմիու-
թյուն, ապա նրա մեջ կան, թեև կուսակցութ-
յան մեջ մտնելու համար դեռ վոչ բոլորո-
վին հասունացած, բայց բավականին զիտակից
բանվորներ, վորոնք կես կամ մեկ տարուց հետո
կարող են լինել կուսակցության արժանավոր
անդամներ: Բայց առանց ինքնուրույն կազմա-
կերպության, առանց իր ինքնուրույն կերպով
ընտրած մարմինների, վոր իրենք անմիջապես
զեկավարում են կոմյերիտմիության ամբողջ աշ-
խատանքը, կոմյերիտականների դաստիարակվելը

և նրանց կուսակցության համար պատրաստվելը
չեր կարող հարկավոր հաջողությամբ առաջ զը-
նալ: Ահա թե ինչու կոմյերիտմիությունը պիտ-
աներական կազմակերպության հանդեպ հանդիսու-
նում ե ինքնուրույն կազմակերպություն:

**ԻՆՉՊԵՍ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԵՆԱՎԱ-
ՐՈՒՄ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆԸ.**— Իհարկե, սա չի
նշանակում, թե կոմյերիտմիությունը հանդիսա-
նում ե կուսակցությունից անկախ մի կազմա-
կերպություն, վոր աշխատում ե կուսակցության
զեկավարությունից ու վորոշումներից անկախ:
Ընդհակառակը, կոմյերիտմիության ծրագրի և կա-
նոնադրության մեջ ասված ե, վոր կոմյերիտ-
միության կենտրոնական կոմիտեն լրիվ ու ամ-
բողջությամբ յենթարկվում ե կուսակցության
կենտրոնական կոմիտեյի և բոլոր կուսակցական
համագումարների, բոլոր վճիռներին ու վորոշում-
ներին: Կոմյերիտմիությունն աշխատում ե կու-
սակցության ամիջական ղեկավարության տակ,
բայց այս ղեկավարությունը տարբերվում ե այն
զեկավարությունից, վոր գործադրում ե կոմյե-
րիտմիությունը պիտաներների վերաբերմամբ: Կոմ-
յերիտմիությունը ղեկավարում ե պիտաներներին
անմիջապես՝ նրանց պիտաներական գնդերի զը-
լուխ կանգնեցնելով իր նշանակած առաջնորդնե-
րին, կամ իր նշանակած կոմյերիտական ղեկա-

վարեներին: Իսկ կուսակցութիւնը այլ կերպ ե ղեկավարում կոմյերիտմիութեանը:

Կուսակցութիւնը յերեք ուղղութեամբ ե ղեկավարում կոմյերիտմիութեանը: Ամենից առաջ կուսակցութիւնը ընդհանուր ղեկավարութիւնը իրագործում ե կոմյերիտական աշխատանքների ընդհանուր հարցերը զննելով կուսակցական համագումարներում, ժողովներում, կոնֆերենցիաներում ու կուսակցական կոմիտեներում, ե տալիս ե ընդհանուր հրահանգներ:

Այսպես որինակ՝ կուսակցական վերջին XIII-րդ համագումարում ըննվեց յերիտասարդութեան հարցը, ղեկուցեց կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի անդամ ընկ. Բուխարինը, վոր իր ղեկուցման ե համագումարի ընդունած բանաձևի մեջ կոմյերիտմիութեան բոլոր աշխատանքների համար տվեց ընդհանուր հրահանգներ, ղծեց ընդհանուր ուղիներ: Այդ հրահանգներին պարտավոր են յենթարկվել ինչպես բոլոր կոմյերիտմիութեանն ամբողջութեամբ, այնպես ել յուրաքանչյուր կոմյերիտականը զատ-զատ: Այդպիսի հրահանգներ ե վորոշումներ ընդունվում են նաե տեղական համագումարներում, կոնֆերենցիաներում ժողովներում ու տեղական կուսակցական կոմիտեներում:

Կուսակցութեան կողմից կոմյերիտմիութեան

ներ ղեկավարելու յերկրորդ ձևը հանդիսանում ե ամրացրած կուսակցականների ինստիտուտը, վոր ամենից շատ գոյութիւն ունի կոմյերիտմիութեան ստորին կազմակերպութեանների, կոմյերիտական բջիջների մեջ: Յուրաքանչյուր գործարանային ե գյուղական-գավառակային բջիջում կուսակցութեանից կոմյերիտմիութեանն ամրացված ե լինում մեկ, իսկ յերբեմն ել ավելի ընկեր: Այդ ամրացված հասակավոր կուսակցականը կոմյերիտմիութեան մեջ շարունակ չի աշխատում: Նա կատարում ե վորոշ, իր, մշտական վորեւե կուսակցական, պրոֆեսսորնալ կամ հասարակական աշխատանքը, կամ հանդիսանում ե գազգյահի բանվոր: Նրա աշխատանքները կոմյերիտմիութեան մեջ արտահայտվում են միայն նրանում, վոր նա ներկա լինելով կոմյերիտականների ժողովներին, բյուրոների փոխարեն ու զանազան խորհրդակցութեաններին, խորհուրդներ ե տալիս այն դեպքերում, յերբ կոմյերիտները ղգվարանում են լուծել այս կամ այն հարցը, յերբ կոմյերիտները վորեւե կերպ ճիշտ չեն վորոշում այս կամ այն խնդիրը:

Կոմյերիտմիութեանն ամրացրած կուսակցականի դերը միայն այս ե: Կուսակցութիւնը չի նշանակում շատ աշխատավորներ, վորոնք կոմյերիտմիութեան մեջ անմիջապես աշխատանք-

ներ տանելին իբրև կոմյերիտականների բջիջների քարտուղարներ կամ մի այլ մշտական կոմյերիտական գործում: Նա միայն նշանակում է ամրացրած ընկերներ, վորոնք միայն աջակցում են կոմյերիտմիության աշխատանքներին, իսկ իրենք այդ աշխատանքը չեն տանում: Ահա թե ինչ է նշանակում ամրացրածների ինստիտուտ, վորի միջոցով կուսակցությունն անմիջապես կապվում է աշխատում է կոմյերիտմիության մեջ:

Կուսակցության ղեկավարության յերրորդ և ամենակարևոր ձևն այն է, վոր նրանք կոմյերիտմիությունը ղեկավարում են միաժամանակ կուսակցության անդամ կամ թեկնածու հանդիսացող կոմյերիտների միջոցով: Յենթադրենք, 100 մարդից բաղկացած կոմյերիտական բջիջն իր մեջ ունի 20 կուսակցության անդամ և թեկնածու: Հասկանալի չէ, վոր նրանք իրակատար իրավատեր են կուսակցության մնացած բոլոր անդամների և թեկնածուների հետ, վորոնք կոմյերիտմիության մեջ չեն մտնում: Կա հատուկ վորոշում, վոր կուսակցության մինչև 20 տարեկան անդամներից վոշ մեկը իր սվունք չունի կոմյերիտմիության մեջ չլինելու: Ահա այդ կուսակցական ընկերները կոմյերիտմիության մեջ աշխատելով, կուսակցության առաջ, ի հարկե, ավելի մեծ պատասխա-

նատվություն են կրում, քան անկուսակցական կոմյերիտականները: Կուսակցությունը նրանց չի հավաքում, կոմյերիտմիության մեջ առանձին կուսակցական ֆրակցիա չի կազմակերպում, վորովհետև կոմյերիտական կազմակերպությունը չէ թե նույնիսկ իր շարքերում կուսակցության անդամներին կամ շատ քիչ ունի) միևնույն է լիովին ու ամբողջությամբ պարտավոր է և միշտ ել յեթարկվում է կուսակցության վորոշումներին: Այդ պատճառով ել կուսակցությունը չի ստեղծում և միանգամայն սխալ ու աննպատակ կլիներ կոմյերիտմիության ներսը ստեղծել կուսակցական ֆրակցիաներ, վորոնց մեջ կուսակցության անդամներն առանձնանային և ինքնուրույն կերպով նախապես վորոշելին բոլոր այն խնդիրները, վորոնք քննության են առնվում կոմյերիտականների շրջանում: Բայց կուսակցության յուրաքանչյուր անդամ, վորը միաժամանակ հանդիսանում է և կոմյերիտական, պարտավոր է կուսակցության առաջ ավելի մեծ պատասխանատվություն կրել, քան անկուսակցական շարքային կոմյերիտականը: Նա միշտ պետք է մասածի այն մասին, թե արդյոք ճիշտ է կատարում կոմյերիտական աշխատանքները, արդյոք այնպես է կատարում, ինչպես այդ անհրաժեշտ է կուսակցության համար և իր բոլոր վորոշում-

ներն ու առաջարկութիւնները նա միշտ պետք է համաձայնեցնի քարտուղարի, կամ կուսակցական բջիջի հետ: Կուսակցութեան անդամ, կամ թեկնածու կոմյերիտականը ամենից առաջ հանդիսանում է կուսակցութեան անդամ, ապա արդեն կոմյերիտական, այսինքն նրա համար կուսակցական դիւցիպլինը բարձր պետք է լինի կոմյերիտմիութեանական դիւցիպլինից: Յետեւ կոմյերիտմիութեան ինչ-ինչ պատճառով այնպիսի վորոշում է ընդունել, վորը հակասում է կուսակցութեան վորոշմանը (թեև այդ լինել չի կարող, կամ շատ հազվադեպ է պատահում), ապա կուսակցութեան անդամ կոմյերիտականը պարտավոր է, ինչ ել վոր լինի, յենթարկվել իր կուսակցական բջիջի վորոշմանը: Նույնիսկ ավելին: Կուսակցութեան անդամ կոմյերիտականը պարտավոր է կոմյերիտմիութեան մեջ անցկացնել կուսակցական բջիջի վորոշումը, հոգուտ նրա ագիտացիա մղել, բացատրել ազաններին այդ վորոշման անհրաժշտութիւնն ու կենսագործել այն:

Ահա յերեք հիմնական ձևեր, վորոնց միջոցով կուսակցութիւնը անմիջապէս ղեկավարում է կոմյերիտմիութիւնը:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր կոմյերիտմիութիւնն ինքնուրույն կազմակերպութիւն

է, իսկ պիոներները՝ ինքնուրույն կազմակերպութիւն չեն:

ԻՆՏԵՂԵՍ Ե ԿՍՈՈՒՅՎԱԾ Ռ. Կ. Կ. (Բ.)—Այժմ յետեւ մենք անցնենք այն խնդրին, թե ինչպէս է կառուցվում մեր կուսակցութիւնը, ապա այստեղ առանձնապէս շատ խոսելու կարիք չի լինի, վորովհետև պարզ է, վոր չի կարող լինել այնպիսի կազմակերպութիւն, վոր կառողանաւ կուսակցութիւնից վեր կանգնեւ: Կուսակցութիւնը յենթարկվում է Կոմիտեների Գործադիր Կոմիտեին: Կուսակցութիւնը կառուցված է այսպէս կոչված դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի հիման վրա: Իսկ այդ ահա թե ինչ է նշանակում: Կուսակցութեան ամենագերագոյն որդանը հանդիսանում է կուսակցական համագումարը, վորն ընտրում է կենտրոնական Կոմիտե: Համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում կուսակցութեան ամենաբարձր որդանը հանդիսանում է կուսակցութեան կենտրոնական Կոմիտեն, վորի վորոշումներին պետք է յենթարկվեն կուսակցութեան բոլոր ֆրագամ կազմակերպութիւնները: Հենց դրա մեջ է կենտրոնացման ելութիւնը, վոր կուսակցութեան կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում կուսակցութեան անունից վարելու բոլոր աշխատանք-

ները, և վոր հիմնական վորոշումները կուսակցական համագումարներն են ընդունում: Կուսակցության կենտրոնական կոմիտեյին դեմ վոչ մի վորոշում թույլատրելի չէ վորևէ կազմակերպության կողմից, այլապես մեր կուսակցությունը միասնական ամբողջություն չէր ներկայացնի: Յեթե կենտրոնական կոմիտեն աներ վորևէ մի սխալ, ապա նրան կողղեր կուսակցական համագումարը, և վոչ վոք բացի համագումարից:

Ինչու յե այդ կենտրոնացումը կոչվում դեմոկրատական: Հենց նրա համար, վոր կուսակցությունը այսպես ե կառուցված՝ 1) Կուսակցության Կ. Կ. ու կոմիտեները ընտրվում են համագումարի կողմից, 2) հիմնական վորոշումները կենտ. կոմիտե յեն գալիս ներքևից — կուսակցության շարքային անդամների մասսաներից, այսինքն կուսակցական համագումարից առաջ քննվում են բլիշներում, իսկ հետո վերջնական լուծումն ստանում կենտրոնական կոմիտեյում: Դեմոկրատիզմի ելությունն այն ե, վոր կուսակցության կենտրոնական ու տեղական բոլոր կոմիտեները կուսակցության անդամների ամբողջ մասսային իրենց նշած բոլոր խնդիրների քննությանը, վորոշմանն ու ել ավելի շուտ իրականացմանը մասնակցելու յեն զրավում:

Այդ դեմոկրատիզմը խհաճո մշտապես հնա-

րավոր չե, վորովհետև ինչպես միջազգային, այնպես ել տնտեսական քաղաքականություն մեջ կան այնպիսի խնդիրներ, վոր ստիպված ե վորոշել կենտրոնական կոմիտեն ինքնուրույն կերպով չտեղեկացնելով նույնիսկ կուսակցության շարքային անդամներին, վորովհետև մեր Խորհրդային Միությունն ապրում ե կապիտալիստական շրջափակման մեջ և կան մի շարք վորոշումներ, վոր բերնե-բերան զցել, շատախոսել չի կարելի, այլապես դա ձեռնառու կլինի ամբողջ աշխարհի կապիտալիստական զիշատիչներին ու ուս սպիտակ գվարդիականներին: Այս պատճառով հասկանալի յե, վոր չի կարելի բոլոր խնդիրները կուսակցության անդամների քննությանը դնել: Յերբ մենք գտնվում եյինք ռազմական կոմունիզմի և քաղաքացիական պատերազմի շրջանում, ժամանակը չէր քննության առնել վորևէ խնդիր, այլ անհրաժեշտ եր միայն արագ գործել: Հենց ներկայումս ել կան քաղաքական բնթացիկ կյանքին վերաբերող մի շարք խնդիրներ, վոր չի կարելի հանձնել կուսակցության բոլոր անդամների քննության, վորովհետև դրա համար պետք կլիներ յերկար ժամանակ և դա միայն կդանդաղեցներ ու թույլ չէր տա խնդիրը ճիշտ լուծել: Այդ պատճառով համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում կենտրոնական կոմի-

տեն կամ նահանգական և այլ կոմիտեները աշխատելով այդ համագումարների հրահանգների համաձայն, մի շարք խնդիրներ վորոշում են ինքնուրույն կերպով, չլծողներով կուսակցական կազմակերպությունների քննություն: Բայց հիմնականում ամենաբարդ, բանվոր դասակարգի համար ամենացավոտ խնդիրները, ինչպիսիք են՝ աշխատանքի արտադրողականությունն ու մեքքաղաքական կյանքի նույնանման խնդիրները, միշտ հանձնվում են կուսակցության անդամներին վողջ մասսայի քննության: Ահա թե ինչն է այսպես կոչված դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի ելությունը:

Հենց այս սկզբունքով ել կառուցված է կոմյերիտմիության կազմակերպությունը: Կոմյերիտական կազմակերպությունների մեջ ել կոմյերիտմիության գերագույն որդանը հանդիսանում է համառուսական կոմյերիտական համագումարը, իսկ համագումարների մեջն յեղած ժամանակամիջոցում՝ Ռուսական Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միության Կենտրոնական Կոմիտեն:

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ, ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԵՌՆԵՐՆԵՐԻ ՍԵՐՏ ԿԱՊԸ.—Այսպիսով մենք տեսնում ենք, վոր մեր յերկրում մենք յերեք կազմակերպություն ունենք, վոր իրենց մեջ ժանվոր դասակարգի և գյուղացիության յերեք

սերունդն են յնդգրկում: Այդ կուսակցությունը, կոմյերիտմիությունը և պիոներներն են: Նրանց մեջ գոյություն ունի ամենասերտ կապ, կապ վոչ միայն իբրև ամբողջական կազմակերպություններ, այլ և կապ գոյություն ունի և պետք է ունենա կուսակցության ամեն մի շարքային անդամի, կոմյերիտի և պիոներների միջև:

Մենք ունենք մի հին կազմակերպություն ևս, վորի մեջ ամբողջ յերեք սերունդը իրար հանդիպում են: Այդ ընտանիքն է հաճախ ասում են, թե ընտանիքը խանգարում է կոմյերիտմիության մեջ մտնելուն, ընտանիքը խանգարում է կուսակցության մեջ մտնելուն, ընտանիքն յերբեմն խանգարում է պիոներական գնդերի մեջ մտնելուն: Այդ ժամանակ այդ ընտանիքի մեջ գոյություն ունի գժտություն ու աններդաշնակություն:

Ամեն մի կոմյերիտական, ամեն մի պիոներ ու կուսակցության ամեն մի անդամ յերբեմն զգացել է, թե ինչ ուժեղ կերպով խանգարում են իր աշխատանքներին այդ աններդաշնակությունները, վոր գոյություն ունի պրոլետարական և առանձնապես վոչ պրոլետարական գյուղացիական և այլ ընտանիքներում, ուր հաճախ յեթե հայրը կուսակցության անդամ է, ապա մայրն անկուսակցական է ու միաժամանակ կրոնասեր

և սաստիկ բարեկանում ե հոր վրա: Կամ յեթե ծնողներն անկուսակցականներ են, իսկ յերեխաները՝ կոմյերիտականներ, կամ պիոներներ, ապա ծնողները հայհոյում են ու նույնիսկ ծեծում յերեխաներին նրա համար, վոր նրանք մտնում են աշխատելու կոմյերիտաթյան, կամ պիոներական գնդերի մեջ:

Կոմունիզմի ժամանակ չեն լինի առանձին ընտանիքներ, վորոնք ապրելին իբրև ինքնուրույն միավորներ: Յերեխաները կդաստիարակվեն մանկապարտեզներում ու մանկական կադմակերպություններում ամբողջ որովա ընթացքում: Այնպես վոր ընտանիքն, իբրև ինքնուրույն ամբողջություն չլինի: Բայց ընտանիքի վերացումը դեռ շատ հեռու է, իսկ մինչ այդ կուսակցության բոլոր անդամների, կոմյերիտականների և պիոներների անելիքներից մեկն էլ այն է, վոր ընտանիքի վողջ անդամների միջև յեղած անհամերաշխությունների վրա հիմնված հին ընտանիքից ստեղծեն ամուր միաձուլված կոմունիտական միավոր, վորտեղ մեկն ոգնում է մյուսին: Ամենալավն այն կլինի, վոր ամեն մի ընտանիքում ստեղծվեր այնպիսի վիճակ, վոր նրա բոլոր անդամները դառնային կուսակցության, կոմյերիտաթյան անդամ և պիոներական գրնդերի անդամ: Ի հարկե, մենք գրան ամբողջո-

վին ու լրիվ հասնել չենք կարող: Բայց ինչ էլ վոր լինի, այդ նպատակին հարկավոր է ձգտել և մի շարք ընտանիքների վերաբերմամբ նրա իրականացումը հնարավոր է: Այժմ իսկ կան շատ ընտանիքներ, ուր ծնողները կուսակցության անդամ են, իսկ յերեխաները՝ կոմյերիտներ, կամ պիոներներ (չհաշված, ի հարկե, ծերերին կամ վոքրիկներին—մինչ պիոներական հասակի մանուկներին): Բացի այդ ներկայումս յերևան են յեկել «Հոկտեմբերյանների» կազմակերպությունները, վորոնք ստեղծվում են կոմյերիտների և պիոներների կողմից ու համախմբում մինչև 10 տարեկան հասակ ունեցող յերեխաներին: Յուրաքանչյուր կոմյերիտականի անելիքն այն է, վոր նա վոչ միայն պետք է ակտիվ կերպով աշխատանք վարի իր կազմակերպության, արտադրության ու անկուսակցական բանվորների միջև, այլև այն, վոր կոմունիստական կուսակցության կողմը գրավի (իսկ յերբեմն էլ կոմունիտական կուսակցության մեջ գրավի) իր ծնողներին, մեծ յեղբայրներին ու քույրերին, իսկ վոքրիկ յեղբայրներին ու քույրերին էլ՝ պիոներական գնդերի մեջ:

Ահա այդ կապը զանազան սերունդների միջև (լինի այդ ընտանիքում, թե արտադրության մեջ կամ տկումբում), հսկայական նշանակություն

ունի և մի անգամ ընդմիշտ լուծում ե ծնողների և յերեխաների միջի հարաբերությունների խնդիրը: Հին բուրժուական կարգերում, յերբ գոյութիւն ունեյին գանազան դասակարգեր, յերբ մեկ դասակարգը ճնշում եր մյուսին, ծնողների ու յերեխաների մեջ շարունակ թշնամութիւն կար: Հայրերի և զավակների խնդիրը մեկն եր այն հիմնական հարցերից, վոր քննվում եր անցյալ և ներկա դարի բոլոր զրաւան աշխատութիւնների մեջ: Յեւ իրողք, ամեն մի բուրժուական ու ազնւական, կալվածատիրական ընտիրքում համերաշխութիւն չկար, այլ (յեթե վերցնենք ազնւական ընտանիքը) շարունակ տեղի եյին ունենում գժտութիւններ, յերբ հայրը կողմնակից եր հին ստրկատիրական կարգերին, իսկ արտասահման՝ Մնգլիա, Փրանսիա, և այլ բուրժուական յերկրներ ճանապարհորդած և բուրժուական կարգերի հոռն առած ուսանող զավակները ավելի շատ կողմնակից եյին բուրժուական կարգերին, յերբ ծնողները մեծ մասամբ թագավորի անսահման միապետութեան կողմն եյին, զավակները ձգտում եյին դեպի բուրժուական կարգերը, դեպի պարլամենտական խոսարանի իշխանութիւնը: Յեթե մենք վերցնենք գյուղական ընտանիքը, հաճախ կոեանենք, վոր այստեղ ևս տեղի յեն ունեցել և ունեն անհամերաշ-

խութիւններ, յերբ ծնողներն ավելի շատ թեքված են դեպի համրատարրերը, դեպի ունեւոր գյուղացիները, իսկ ջահելները գյուղական յերիտասարգութիւնը դեպի կոմունիստական կուսակցութիւնը: Յեւ այդ համերաշխութիւնը ծերերի և փոքրերի միջև անխուսափելի յեն մինչ այն ժամանակ, քանի դեռ գոյութիւն ունի հասարակութեան դասակարգերի բաժանվելը:

Այդ խնդիրը միանգամ ընդ միշտ լուծեց կոմունիստական կուսակցութիւնը, վորտեղ հին և նոր սերնդի միջև բաժանում չկա, չի յեղել և չի կարող լինել: Կոմունիստական կուսակցութիւնը, դա այնպիսի կուսակցութիւն ե, վորն ըստ իր նպատակների, ըստ աշխատանքի և ըստ կառուցվածքի հանդիսանում ե առաջավոր դասակարգի — պրոլետարիատի կուսակցութիւն: Այս կուսակցութեան մեջ նույնիսկ ծերերն են յերիտասարդանում, վորովհետեւ մեզանում կուսակցութեան մեջ չեն կարող լինել այնպիսի մարդիկ, վորոնք հոգով արի չլինեյին, անձնական փակ կյանքից չհրաժարվեյին ու իրենց ամբողջ ուժերը չնվիրեյին հանուն կոմունիզմի պայքարելու գործին, վորովհետեւ մեր կուսակցութիւնը պաշտպանում ե ամենայերիտասարդ, ամենահեղափոխական դասակարգի — բանվոր դասակարգի շահերը: Մեր կուսակցութեան մեջ հների ու նո-

բերի բաժանում չի կարող լինել այն չափով, ինչ չափով նա հանդիսանում է պրոլետարիատի մարտական ավանգարդն ու պաշտպանում վողջ բանվոր դասակարգի շահերը:

ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՀԻՆ ՅԵՎ ՆՈՐ ԳՎԱՐԴԻԱՆ.— Ահա թե ինչու անհրաժեշտ է, վոր մենք ձգտենք բանվոր դասակարգի հին սերնդի, հին հեղափոխականների, հին կուսակցական գվարդիայի և յերիտասարդ կոմյերիտմիութենական գվարդիայի միջև ըստ հնարավորին ավելի սերտ կապ ստեղծել: Այդ կապին մենք պետք է ձրգտենք արտադրության մեջ, ընտանիքի մեջ, ահումբում ու բոլոր հասարակական աշխատանքների մեջ և յերբեք չպիտի հակադրենք մատաղ սերունդը հին սերնդին: Մենք միշտ պիտի հիշենք, վոր յերիտասարդությունը պետք է սովորի կոմունիստական կուսակցության մեր հին անդամներից, իսկ հին անդամները մատաղ սերնդի դաստիարակության գործին պետք է մեծ ուշադրություն դարձնեն, մեծ ուժ և յեռանդ բաժին հանեն: Կոմունիստական հին գրվարդիան անցել է հեղափոխական պայքարի լենինյան լավ դպրոցը: Կոմունիստական յերիտասարդությունը պետք է յուրացնի պայքարի այդ փորձը, պետք է ձեռք բերի բայոչևիկյան կուռ կոփվածություն՝ վորպեսզի սովորի կովել այնպես,

կամ ել ավելի լավ, ինչպես կովում էյին կուսակցության հին անդամներն անցած տարիների ընդհատակյա աշխատանքների, քաղաքացիական կռիվների ժամանակ կամ վերջին տարիներում յերբ նրանք հերոսական կռիվ էյին մղում հին սովորությունների և կյանքի հին պայմանների դեմ: Ահա թե ինչու համար է հարկավոր ամենասերտ կապ մեր կուսակցության հին գվարդիայի և յերիտասարդ բանվոր ու բանվորուն ու միջև: Բայց մյուս կողմից ել կուսակցության այդ հին անդամները պետք է հիշեն, վոր իրենք պարտավոր են առավելագույն ուժ և յեռանդ գործ դնել, վորպեսզի կարողանան ավելի լավ մերձեցում ունենալ բանվոր դասակարգի մատաղ սերնդին, յերիտասարդությանը: Մեր առջև դրված են բոլորովին միանման խնդիրներ: Շահված են բոլորովին միանման կոմունիստական թեքի հակամարտություն չկա: Կոմունիստական թեքի հին սերունդը և թեք նորը միատեսակ դասակարգ են և միատեսակ շահեր ունեն: Կուսակցությունը, կոմյերիտմիությունն ու պիոներները սկսած ընտանիքից և վերջացրած կոմյերիտական ու պիոներական կազմակերպություններով, ավելի սերտ կերպով, քան մինչև այժմ պետք է ձուլվեն միմյանց: Կռիվների մեջ յեփված հին բանվորների, բանվոր-բանվորունների և աղվա-մազով դեռ չծածկված ու դեռ նոր միայն քա-

ղաքականապես աճած կամ դեռևս աճող, բանվորա-գյուղացիական մատաղ սերնդի միջև ամենուրեք անհրաժեշտ է սերտ մերձեցում և սերտ միություն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0180922

1
2



ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.